Թուրքիայից ներմուծումը կրճատվել է ավելի քան երեք անգամ

Ինչպես տեղյակ եք ՀՀ կառավարության կողմից թուրքական ծագման որոշ ապրանքների ներմուծումը արգելվեց ՀՀ-ում: Ամենայն հավանականությամբ, այս որոշումը կրկին կերկարաձգվի (ԵԱՏՄ ընթացակարգերը թույլ են տալիս նման արգելափակումները կիրառել 6 ամիս ժամկետով, սակայն արգելափակում կիրառելու քանակային սահմանափակում չկա և հետևաբար պրակտիկայում այն կարելի է երկարաձգել, քանի դեռ նման կարիք կա): Փորձել եմ ապրանքների ներմուծման ծավալների մաքսային վիճակագրության տվյալների հիման վրա որոշ դիտարկումներ կատարել հընթացս հաստատելով կամ հերքելով որոշ հիպոթեզներ:

Աղյուսակ 1. Ապրանքների ներմուծման ծավալները և Թուրքիայի մասնաբաժինը

	2017	2018	2019	2020	2020 I կիսամյակ	2021 I կիսամյակ
Ապրանքների ներմուծման ընդհանուր ծավալները, մլն ԱՄՆ դոլար	4097.1	4975.5	5537.6	4583.3	2030.9	2192.2
Թուրքիայից ներմուծումը, մլն ԱՄՆ դոլար	228.3 (5.6%)	251.3 (5.1%)	266.8 (4.8%)	227.3 (5.0%)	98.9 (4.9%)	28.5 (1.3%)
Ներմուծման խոշորագույն ապրանքախմբերը և դրանց տեսակարար կշիռը արժեքում	Սև մետաղե դուռ, պատուհան, ցանց և շինարարական այլ իրեր-7.6 մլն ԱՄՆ դոլար (3.3%)	Տրիկոտաժե այլ հագուստ-11.4 մլն ԱՄՆ դոլար (4.6%)	Նավթ և նավթամթերք 24.3 մլն ԱՄՆ դոլար (9.1%)	Տրիկոտաժե այլ հագուստ-14.3 մլն ԱՄՆ դոլար (6.3%)	Տրիկոտաժ ե այլ հագուստ-8.6 մլն ԱՄՆ դոլար (8.8%)	Տրիկոտաժ ե այլ պաստառ մեքենայակ ան և ձեռքի հյուսքով-2.8 մլն ԱՄՆ դոլար (9.8%)

Ինչպես նկատում ենք Աղյուսակ 1-ից կառավարության որոշումից հետո Թուրքիայից ներմուծումը (ընդհանուր ներմուծման աճի պարագայում) **նվազել է ավելի քան երեք անգամ**: Այս առումով փորձել ենք **ստուգել հետևյալ վարկածը, արդյոք թուրքական ապրանքները ներմուծվում են նույն քանակությամբ, սակայն փոխվել է նրանց ծագման երկիրը:** Ամենահավանական սցենարի պարագայում այդ փոփոխությունը կարող է կատարվել, եթե Վրաստանից ներմուծումը էական ավելանար: Վիճակագրական վերլուծությունը փաստում է, որ ամբողջական փոփոխման մասին ռիսկի դրսևորումը բացակայում է: Մասնավորապես դիտարկվող ժամանակահատվածում Վրաստանից ներմուծումը աճել է միայն 17 մլն դոլարով, մինչդեռ Թուրքիայից ներմուծումը նվազել էր շուրջ 70 մլն դոլարով (Վրաստանի և այլ երկրների մասով համեմատություններ անելիս անտեսում ենք բնականոն աճի գործոնը):

Թուրքիայից որոշակի ապրանքների ներմուծման արգելքի պարագայում ենթադրվում էր, որ այս խորշը հնարավոր կլիներ փոխարինել կամ տեղական արտադրությամբ, կամ Չինաստանից ներմուծման ավելացմամբ, կամ էլ ՌԴ-ից:

Վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Չինաստանից ծավալները գրեթե անփոփոխ են, ՌԴ-ից ներմուծումը ավելացել է, բայց ոչ այն չափով ու ոչ այն ապրանքային ուղղությամբ, որոնց մասով ներմուծումը իրականացվում էր Թուրքիայից (տես Աղյուսակ 2): Ավելին, ավելի մանրամասնեցված ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ Թուրքիայից Հայաստան ներմուծվող ապրանքները ներմուծվում են նաև ՌԴ կողմից: Այսպիսով կարող ենք առաջ քաշել այն վարկածը, որ կառավարության կողմից ընդունված որոշումը որոշակիորեն նպաստել է **ներմուծման փոխարինմանը** և թուրքական ապրանքների խորշը որոշակիորեն զբաղեցրել են հայկական ապրանք արտադրողները: Այս մասով եզրակացություն անելիս կարևորել ենք կարողությունները և

անտեսել ենք գնաճային հնարավոր ճնշումների և թուրքական ապրանքների իրացման գործընթացում ներգրավված աշխատողների նոր պայմաններին ադապտացման հետ կապված հարցերը:
Ամփոփելով կարծում եմ, որ այս որոշումը և դրա հետագա երկարաձգումը փաստարկված էր ու հնարավորություն է ընձեռում հայրենական ապրանքարտադրողներին բարեհաջող կերպով իրականացնել ներմուծման փոխարինումը: Ամեն դեպքում Թուրքիայից ներմուծման կառուցվածքը ուսումնասիրելիս նկատում ենք, որ առկա է այդ խորշերը բարեհաջող զբաղեցնելու և կամ փոխարինելու հիմքեր: Նշվածի համատեքստում կարևոր նշանակություն ունի ԵԱՏՄ կողմից Թուրքիային արտոնյալ սակագների տրամադրումից զրկելը, որը կարող է հավելյալ խթան հանդիսանալ թուրքական ապրանքների նկատմամբ ԵԱՏՄ ապրանքների մրցունակության բարձրացման գործընթացում:

Աղյուսակ 2. Հարևան երկրներից ներմուծման դինամիկան և հիմնական ուղղությունը

	2021 I կիսամյակ	2020 I կիսամյակ	2020	2019	2018	2017
Ներմուծումը Իրանից	190.6	148.2	316.9	324	276.7	181.3
Խոշորագույն ապրանքային ուղղությունը[1],	Նավթային գազեր և գազանման այլ ածխաջրածիններ-29.1 մլն ԱՄՆ դոլար (15.3%)	Նավթային գազեր և գազանման այլ ածխաջրածիններ-46.3 մլն ԱՄՆ դոլար (31.3%)	Նավթային գազեր և գազանման այլ ածխաջրածիններ-62.8 մլն ԱՄՆ դոլար (19.8%)	Նավթային գազեր և գազանման այլ ածխաջրածիններ-60.1 մլն ԱՄՆ դոլար (18.6%)	Նավթային գազեր և գազանման այլ ածխաջրածիններ-85 մլն ԱՄՆ դոլար (30.7%)	Նավթային գազեր և գազանման այլ ածխաջրածիններ-57.8 մլն ԱՄՆ դոլար (31.9%)
Ներմուծումը ՌԴ-ից	827.2	751.9	1651.5	1648.3	1417.8	1288
Խոշորագույն ապրանքային ուղղությունը,	Նավթային գազեր և գազանման այլ ածխաջրածիններ 189.9 մլն ԱՄՆ դոլար (23%)	Նավթային գազեր և գազանման այլ ածխաջրածիններ 173.2 մլն ԱՄՆ դոլար (23%)	Նավթային գազեր և գազանման այլ ածխաջրածիններ 364.4 մլն ԱՄՆ դոլար (22.1%)	Նավթային գազեր և գազանման այլ ածխաջրածիններ 357.5 մլն ԱՄՆ դոլար (21.7%)	Նավթային գազեր և գազանման այլ ածխաջրածիններ 291 մլն ԱՄՆ դոլար (20.5%)	Նավթային գազեր և գազանման այլ ածխաջրածիններ 299.4 մլն ԱՄՆ դոլար (23.2%)
Ներմուծումը Վրաստանից	48.9	32	78.5	87.3	70.3	92.9
Խոշորագույն ապրանքային ուղղությունը	Այլուր՝ մսից և ջրային կենդանիներից-5.4 մլն ԱՄՆ դոլար (11.1%)	Հանքային կամ քիմիական ազոտի պարարտանյութ-3.8 մլն ԱՄՆ դոլար (13%)	Հանքային կամ քիմիական ազոտի պարարտանյութ-5.7 մլն ԱՄՆ դոլար (7.2%)	Ցիանիդ, ցիանիդի օքսիդ-6.9 մլն ԱՄՆ դոլար (7.9%)	Հանքային կամ քիմիական ազոտի պարարտանյութ-8.9 մլն ԱՄՆ դոլար (12.7%)	Էթիլային սպիրտ չբնափոխված, սպիրտի 80%-ից պակաս խտությամբ ըմպելիքներ, լիկյորներ և ալկոհոլային այլ խմիչքներ-21.3 մլն ԱՄՆ դոլար (23%)
Ներմուծումը Չինաստանից, մլն ԱՄՆ դոլար	2.7	2.6	620.7	695	621.3	455.6
Խոշորագույն ապրանքային ուղղությունը,	Ցիտրուսային պտուղներ-0.5 մլն ԱՄՆ դոլար (19.3%)	Բրինձ-0.7 մլն ԱՄՆ դոլար (28.8%)	Հեռախոսային և հեռագրային ապարատ, մոդեմ, մասեր-54.8 մլն ԱՄՆ դոլար (8.8%)	Հեռախոսային և հեռագրային ապարատ, մոդեմ, մասեր-90.6 մլն ԱՄՆ դոլար (13%)	Հեռախոսային և հեռագրային ապարատ, մոդեմ, մասեր-74.4 մլն ԱՄՆ դոլար (12%)	Հեռախոսային և հեռագրային ապարատ, մոդեմ, մասեր-46.8 մլն ԱՄՆ դոլար (10.3%)

[1] Խոշորագույն ապրանքային ուղղություն ենք դիտարկել տվյալ երկրից ներմուծման մեջ ամենամեծ մասնաբաժին ունեցող ուղղությունը: